ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 4
№ ԳՀԱՊՁԲ-7/7-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «Էրիզ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ասլանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 20.02.2018թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-7/7-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1.1 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում մատակարարել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի կողմից մատակարարվող ապրանքի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **4914565,81 (չորս միլիոն ինն հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր վաթսունհինգ ամբողջ ութսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ**: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդը մատակարարված ապրանքների դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էրիզ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ն. Զարյան 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500521818118
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00089186
ՀՀ պաշտպանության նախարարության	Տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Քանակը	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը 2020թ. , ընդ որում				
						մարտ	Ապրիլ	մայիս	հունիս	Հուլիս
1	թեյ /Թեյ/	կգ	1357.99	3619	4914565,81	750	750	750	750	619

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝									
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	Սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	թեյ /Թեյ/	15863200/1	1018492,5	2036985	3055477,5	4073970	4914565,81	4914565,81	4914565,81	4914565,81	4914565,81	4914565,81

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էրիզ» ՍՊԸ
Տնօրեն

Ա. ԱՍԼԱՆՅԱՆ